

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ Գ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ
ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀԱՎԱՔՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅՐԻՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
բանահյուսության տեսության և պատմության բաժնի գիտաշխատող
էլփոստ՝ hayriyan.1976@mail.ru

Հայ բանագիտության պատմության կարևոր շրջափուլերից մեկը նշանավորվել է Գ. Սրվանձությանցի գործունեությամբ՝ լայնորեն լուսաբանվելով և արժևորվելով բանագիտության, հասարակական մտքի զարգացման պատմության շրջանակներում: Սրվանձությանցի ժամանակակիցների հուշերը, նրա ընդհանուր նկարագրին վերաբերող բնութագրերն ու աշխատանքի արժեքը բնորոշող կարծիքները տեսանելի են դարձնում գնահատականների ուրվագիծը, ինչպես նաև ժամանակին նրա շուրջ ձևավորված գիտամշակութային մթնոլորտը, որը Սրվանձությանցի վկայությամբ քաջալերանքի և ոգևորության աղբյուր է հանդիսացել իր համար: Ժամանակակիցների հիմնականում հիմնավոր մտահանգումների ու կանխատեսումների համաձայն՝ Սրվանձությանցը գավառի հային խավարից հանող և դեպի լույսն առաջնորդող, ժողովրդի միտքն արթուն պահող լուսավորիչ էր, իսկ նրա բանահավաքչական արդյունավետ ու ոգեշնչող մեկնարկը՝ նուրբ ճաշակով և գրեթե հանճարեղաբար կազմած բացահայտումների ամբողջություն, կարծրատիպեր կոտրող իրողություն, քանի որ մինչ այդ թյուր կարծիք էր ձևավորվել, թե հայերը զուրկ են ժողովրդական բանավոր ավանդությունից: Ըստ անվրեպ կանխատեսումների՝ Սրվանձությանցն այն կարող ուժի մարմնավորումն էր, ով պետք է դառնար հայ բանահավաքչության, բանագիտության և ազգագրության, գիտական մի շարք այլ ոլորտների ու ազգահեն գրականության հեղափոխական զարգացումն ապահովողը: Մեր նպատակը ոչ միայն Սրվանձությանցի բանագիտական և բանահավաքչական գործունեության վերաբերյալ ժամանակակիցների կարծիքը ներկայացնելն է, այլև՝ ժամանակի քննադատական մտածողության և սկզբունքների, բանավոր ավանդույթի շուրջ ձևավորված պարկերացումների ու վերաբերմունքի ամբողջական պարկերի փոխանցումը:

Բանալի բառեր՝ Սրվանձությանց, բանահավաքչություն, բանագիտություն, շարժում, նյութ, ժողովածու, ժամանակակից:

1892թ-ի նոյեմբերի 18-ի «Հայրենիք» օրաթերթի 306-րդ համարը գումար է Գարեգին Եպիսկոպոսի ցավալի մահը. «Օրհասականներու վիճակին մէջ երբեմն տեսնուած թալեսկան բարեփոխումը կրկնուեցաւ նաև Տ. Գարեգին Եպիսկոպոսի համար ալ: Առտուն ինքնզինքը քիչ մը լաւ զգացած էր, սակայն 4¹ ին յանկարծ տագնապ մը ունեցաւ. իր եղբօրդին Յարութին էֆէնտի որ քովը կը հսկէր ուզեց դուրս ցատքել և օգնութեան կանչել. սակայն հիւանդը թող չտար ըսելով. –Հո՛ւ կեցի՛ր. Չուզեր: Երբ Յարութին էֆէնտի վերադառնալով իր բազուկներուն մէջ առաւ հօրեղբայրն արդէն խեղճը ի Տէր հանգչած էր»¹,– գրում է պարբերականը՝ հուզիչ ամփոփումով արժանորդելով նրա գործունեությունը. «Ո՛չ միայն հնագէտ մը այլ եւ մեծ գրագէտ մը ըլլալու համար ստեղծուած մտքի մը յատկութիւնները կը պարզուին իր հատորներուն մէջ: Կան էջեր որք արտակարգ հրապոյրի հետ կ'ազդեն նաեւ զարմացում: Սրուանձտեանցի բոլոր գործերը լաւ քննող մը կրնայ հաւատալ թէ անոր տաղանդը թերեւս մօտենար մինչեւ հանճարի սահմանագծերը, եթէ ստացած ըլլար զորեղ կրթութիւն մը: Ինք մին եղաւ այն գրողներէն որք ամենէն առաջ ըմբռնեցին թէ գաւառները պէտք է ուսումնասիրել իրենց բազմակողմանի երեսոյթներուն մէջ:»²,– նկատում է հոդվածագիր Արփիար Արփիարյանը՝ վստահաբար պնդելով, որ «մեր ժամանակակից պատմութիւնը գրողները օր մը անշուշտ պիտի նուիրեն ընդարձակ ուսումնասիրութիւն մը այդ անձնաւորութեան»³: Բարեբախտաբար իրականացավ Արփիարյանի կանխատեսումը, այլ ոչ թէ Սրվանձտյանցինը, ով թերահավատորեն սպասում էր իր գործն ու անձն արհամարհողների և այսպանողների⁴: Սրվանձտյանցի կասկածամտությունը հիմքեր ուներ, քանի որ, ինչպես Սեդրակ Մանդինյանն է վկայում, հատկապես արարատյան հայերը վաղուց ի վեր արհամարհանքով էին խոսում տաճկահայերի մասին՝ համարելով, «թէ նոքա ֆրանսական թոմանների թարգմանութիւններից աւելի ոչինչ չ'ար-

¹ Հայրենիք, 23 տարի, թիւ 306, Հանգիստ Սրուանձտեանց Տ. Գարեգին Եպիսկոպոսի, 1892, էջ 2-3:

² Հրազդան, Տ. Գարեգին Եպսկ. Սրուանձտեանց, նույն տեղում, էջ 1:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս Սրվանձտյանց Գ., Երկեր, հ.1, Երևան, 1978, էջ 86:

տադրեցին իրենց սքոլաստիքական ուղղութեամբ», սակայն հենց այդ սքոլաստիկական միջավայրի մի հայ աբեղա պետք է ընծայեր «իւր նուրբ ճաշակն եւ բուն ազգային ոգու փշրանքները»¹: Նա, ով «Ժողովրդական բանաստեղծության բոլոր տեսակներից ընտիր օրինակներ ներկայացրեց ընթերցողին (երգ, առակ, հեքիաթ, զվարճախոսություն և դյուցազներգություն)» և ունեցավ աննախադեպ հաջողություն, որը, ըստ Մանդինյանի, «կախում» էր «հաաքողի շնորհից, որ իւր նուրբ եւ հանճարեղ ճաշակով» գիտեր «ընտիրն անպէտքից ջոկել»²:

Իր «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ» գրքով (Կ. Պոլիս, 1874) Գ. Սրվանձտյանցը դրեց բանահավաքչական շարժման հիմքը՝ բացելով գրականության կենսատու երակներից մեկը, որն ըստ Ա. Ղանալանյանի «հայ մշակույթի դարավոր պատմության մեջ կատարված մեծագույն հայտնագործություններից մեկն էր»³: Բանահավաքը թերահույս էր և հաջողություն չէր կանխորոշում իր անդրանիկ գրքին. «Այս գործիս հրատարակությունը հասկացողին համար արժեք կունենա, բայց կարծեմ արհամարհողներ ավելի պիտի լինին և այսպանողներ... Ասոնք չհասկցողներն են: Բայց մեր փույթը չէ: Քաջալերված կհամարիմ զիս, եթե համրանքով քսան հոգի և եթ լինին հավանող այս գործույն»⁴,– գրում է «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ» գրքի առաջաբանում: Սակայն բանահավաքի ինքնավստահությունը մեծանում է, քանզի հաջորդ ժողովածուն հրատարակելիս արդեն հավատացած էր, «... թե պիտի գտնվեն ոմանք ոչ միայն նյութույն նկատմամբ, այլև պիտի գտնվին, որ ճանչնան, թե այսպիսի գործ մը պատրաստել և ի լույս ածել ավելի վաստակ կ'առթէ գրասիրի մը, քան ի նորո բան մը հեղինակել»⁵: Իսկ «Համով-հոտովի» նախաբանում ոգևորությամբ խոստովանում է արդեն. «Իմ գոհունակութիւնս այնչափ մեծ է, որ չեմ կարող բացատրել, ընդհանրապէս բանասիրութեան ճաշակ ունեցող ամէն դասերէ վայելածս քաջալերութեան համար...»⁶:

Սրվանձտյանցի գործունեությունը շրջադարձային և պատմամշակութային նշանակություն ունեցավ. թերևս, տեղին է մեջբերել Ժամանակակցի

¹ Սրանձտեանց Գ. Եպ., Համով հոտով, հ.Ա., Փարիզ, 1949, էջ 27:

² Նույն տեղում, էջ 28:

³ Սրվանձտյանց Գ., Երկեր. հ. 1, էջ 12:

⁴ Նույն տեղում, էջ 86:

⁵ Սրվանձտյանց Գ., Մանանայ, Կ. Պոլիս, 1876, էջ 6:

⁶ Սրվանձտյանց Գ., Համով-հոտով, Կ. Պոլիս, 1884, էջ 26:

վկայությունը, որը լիովին տեսանելի է դարձնում իրավիճակն ու պայմանները որտեղ գործել է մեր բանահավաքը. «Այն ժամանակ հայոց գրականության, մանաւանդ թիրքահայերի գրականութեան մէջ չէին տիրում այժմեան հայացքները և տենդեցիաները: Գրականութիւնը՝ ժողովուրդ չէր ճանաչում: «Գրական գռեհկութիւն» էր համարվում, երբ մէկը խոսք էր բացում բուն ժողովրդի, խրճիթներում ապրող գեղջուկի՝ մասին: Եւ ասի մի այդպիսի ժամանակ, մի հայ վարդապետ-իսկ վարդապետը ասելի է պարտական հ ն ա պ ա 2 տ լինել.- համարձակվում է գրիչ վերցնել և նկարագրել մոռացվածը, ստորացրածը, արհամարվածը...!», -գրում է Խաչատուր Մալումյանը (*Ակնունդ*) «Մշակի» 1892թ-ի 137 համարում:

Սրվանձոյանցի նպատակադրումներն ու ակնկալիքները, բանահավաքչական սկզբունքներն ու բանագիտական հայացքները հիմնական գծերով շարադրված են «Գրոց ու բրոց», «Հնոց և նորոց», «Մանանա», «Համով-հոտով» ժողովածուներում, որոնք հայտնություն եղան ժամանակակիցների համար: Հասարակական ջերմ ընդունելության ու ոգևորության բուռն ալիքի մասին վկայում են ժամանակի մտավորականության՝ Գաբրիել և Քերովբե Պատկանյանների, Ղ. Ալիշանի, Գր. Խալաթյանցի, Մ. Էմինի, Ա. Շահնազարյանի, Ս. Մանդինյանի, Պ. Դելիյանի, Ա. Արփիարյանի, Գ. Օտյանի, Հ. Պարոնյանի, Բ. Քեչյանի, Ս. Տեր-Սարգիսենցի (Տևկանց), Գ. Շերենցի, Ծերենցի, Լ. Բաշալյանի, Տիրան Չրաքյանի, Վ. Փափազյանի, Հայկունու, Սերովբե Դերվիշյանի, Հ. Աճառյանի և այլոց գրախոսականները, հոդվածները, մեծաքանակ նամակները, հուշերն ու բազմաթիվ անդրադարձները, որոնց մի մասը հրապարակվել են «Մանանա» և «Համով-հոտով» ժողովածուներում: Այսպիսով, ժամանակի գիտական և գրողական հանրույթը, ականավոր մտավորականներն ու հրապարակախոսները լայնորեն լուսաբանեցին և արժևորեցին Սրվանձոյանցի բանահավաքչական աշխատանքը: Գրիգոր Օտյանը քննելով «Համով-հոտով» ժողովածուն, այսպես է բնորոշում Սրվանձոյանցի խոսքը. «Ձեր ոճին մէջ՝ հայոց կոապաշտական դարերու մոգութիւնն ու դիպօթութիւնը կայ...դուք ոչ իբրև բնագէտ ու բնալոյծ կը պտըտիք ու կը դատէք ծառն ու քարը, հողն ու ջուրը, դուք հոգի կու տաք անոր²»: Իսկ Օտյանը կարողանում էր գնահատել արժեքավորը, ինչպես վկայում է նրա եղբորորդի Երվանդ Օտյանը. նա «իր ժամանակին ամենեն ավելի գրա-

¹ Մալումեան Խ. Գարեգին Սրուանձոտեան, Մշակ, 1892 N 137, էջ 1:

² Երեմեան Հ. Ս., «Բազմավէպ», Գարեգին Սրուանձոտեանց, ամ. 7, փետրուար, թիւ 2, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1912, էջ 59:

կան խառնվածք ունեցող անձն էր: Իր տունը կեդրոն մըն էր, ուր կը հավաքվեին բոլոր գրասերներն ու գրագետները, տոք. Նահապետ Ռուսինյան, Թովմաս Թերզյան, Կարապետ Գարագաշ, Մինաս Չերազ, Փորթուգալյան փաշա, Սագրզ Հովհաննես էֆ. և այլն¹»: Գր. Օտյանը մտերիմ հարաբերություններ ուներ Մատթեոս Մամուրյանի և Մկրտիչ Պեշկյթաշյանի, Վ. Հյուգոյի և Ալֆոնս դը Լամարթինի հետ: Ճաշակավոր գրադատի համբավ վայելող Գրիգոր Օտյանի մասին Արփիար Արփիարյանը, մի առիթով գրել է, որ իրեն «երբեմն այնպես կը թվի թե արդի երիտասարդներեն շատերը կը գրեն այն հույսով և փափագով որ արժանի լինին Օտյան էֆենտիե մի քանի քաջալերական խոսք լսելու²»:

Նշենք, սակայն, որ առկա էր նաև չհիմնավորված կամ նկարագրական սկզբունքով առաջնորդվող գրաքննադատություն, որը հաճախ արժեքավորը արժեզրկելու որոգայթ էր հանդիսանում. ընդգծելով Սրվանձոտյանցի ժողովածուների արժանիքներն ու կարևոր նշանակությունը՝ Դելիյանը ցավով վկայում է, որ Պոլսում «ամէն երկու տող գրել գիտցող համբակի մը գրագետ անունը տալով ա'յնչափ գոված են, որ գովեստը աժանցած է անդ...³»: Ուստի նախընտրում էր խուսափել գովասանքից և միայն շնորհակալական ջերմ և անկեղծ խոսքեր փոխանցել «Գրոց Բրոցի» հայրենախոս հեղինակին իր անգին ընծայի համար, որոնք ոչ թե սոսկ շուրթերով էին ասվում, այլ սրտից բխում⁴:

Սրվանձոտյանցի բանահավաքչական աշխատանքի վերաբերյալ առաջին տեսակետները հնչեցին գրախոսությունների տեսքով: 1874-1875 թթ. ժամանակի մամուլը հրապարակեց Սրվանձոտյանցի անդրանիկ ժողովածուին նվիրված Մ. Աղաբեգյանի, Ա. Հ. Այվազյանի, Րաֆֆու (Մելիքզադե), Ս. Տեր-Սարգսյանի, Գ. Տեր-Աղեքսանդրյանի գրախոսությունները, որտեղ ժողովածուի կարևորությունն ու պատմամշակութային նշանակությունը շեշտելուց զատ ընդգծվում են նաև որոշ թերություններ. Այսպես, օրինակ, Սեդրակ Տեր-Սարգիսենցը, մատնանշելով այն կարևոր բացը, որ Սրվանձոտյանցի ժողովածուով հնարավոր է մասամբ լրացնել, ափսոսանքով նկատում է երկու թերություն. «...առաջին Ծրագրողին գիտութեամբ համառօտ անցնիլ, և ջիշել այն բազմաթիւ աւանդութիւնք, որ ինքն կ'յիշէ. երկրորդ՝ բառերու բա-

¹ Օտյան Եր., Գրական հիշատակներ, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1962, էջ 12:

² Տե՛ս «Արևելք», լրագիր, Կ. Պոլիս, թիվ 339, 18 փետրվարի, 885:

³ Սրվանձոտյանց Գ., Համով հոտով, հ. Ա, Փարիզ, 1949, էջ 31-32:

⁴ Տե՛ս Սրվանձոտյանց Գ. Համով-հոտով, էջ 31-32:

ցատրութեան յաւելուած մը չունենալ իր վերջ, որով գաւառացոց լեզուին անծանօթ բանասէրները, կարելի է դժուարութեամբ հասկընան իւրաքանչիւր բառի ու խօսքի բուն իմաստն ու կորովը¹։ Այս դիտարկումները, սակայն, չեն խանգարում գրախոսին հստակ գիտակցել և նշել «վշտեր ամօքող» գրքուկի «բարձր նիւթի» նշանակությունը, որի շնորհիվ «բազմաթիւ ուսեակներուն ծիծաղելի առասպել ու մէր մամու մասալ կարծուածները» պետք է դառնան առավել հասկանալի և բացահայտեն «անոնց նշանակութեան բարձրութիւնը»² Գրախոսը, որ երկար ժամանակ ապրել էր «ազգային անհուն հնութիւնք հետազօտելու և 'ի մի հաւաքելու» կարևորության գիտակցումով, աչքի առաջ ունենալով գերմանական առաջադիմության փորձը, որի նախադրյալը համարում էր «գաւառական բարբառն և հին ասանդութիւնք հետազօտելը», գրախոսվող ժողովածուն կենսական անհրաժեշտություն է համարում ազգային ավանդությունների և հնությունների ուսումնասիրության համար³։ Նկատենք, որ Սրվանձտյանը կարևորում էր գրախոսի՝ Սեդրակ Տեր-Սարգիսենցի կարծիքը, խոստովանելով որ «Գրոց ու բրոցի» դեռևս անտիպ նյութերի մասին առաջին գնահատականը լսել է նրանից՝ իր բարեկամից, նկատի ունենալով Վարագա հոջակավոր դպրոցի երբեմնի սան Սեդրակ Տեր-Սարգիսենց-Տեկանցին։ Նրա խորհրդով գիրքը հրատարակվում է նախնական վիճակով, առանց կրճատումների և խմբագրական միջամտությունների՝ գրառման հարազատությամբ։ Սրվանձտյանցը վկայում է, որ հենց բանահյուսական նյութերով զմայլված ընկերոջ խորհրդով չի կրճատել իր գրառումները⁴։

Գրախոս Մելիքզադեն (Րաֆֆին) էլ, «Մշակի» 1875 թ-ի հունվարի 16-ի 2-րդ համարում բողոք բարձրացնելով «անհոգության» դեմ, որի պատճառով 19-րդ դարի սերունդը լոկ պատառիկներ ուներ հին գրույցներից ու ավանդություններից, ակնկալում էր, որ «հնագիտական առատ և անմշակ նիւթեր» ընծայող աշխատությունը «օրինակ և խրախույս կը տայ շատերին»՝ «Հայաստանի ամէն մի գաւառի ժողովրդական ասանդութիւնները այդպէս» հավաքելու համար⁵։ Փորձելով պարզել որոշ ավանդությունների պատմական հիմ-

¹ Տե՛ս Արեւելեան մամուլ, Ե տարի, հունվար, Ս. Տեր-Սարգիսենց, Գրոց եւ Բրոց, 1875, էջ 16:

² Նույն տեղում, էջ 12-13 :

³ Նույն տեղում, էջ 13:

⁴ Տե՛ս Սրվանձտյանց Գ., Գրոց ու բրոց, Կ. Պոլիս, 1874, էջ 6-7:

⁵ Տե՛ս Մելիքզադէ, Գրոց ու Բրոց կամ Սասունցի Դավիթ գրքոյկի առիթով, տպուած Կ. Պոլսում, 1874 ամի Գ.Վ. Սրուանձտեանցի աշխատասիրութեամբ, «Մշակ», յունուարի 23, N3, 1875, էջ 1- 3:

քերը՝ գրախոսը հենց ինքն էլ հիշատակում է մի քանիսը: Այսպես, օրինակ, անդրադառնալով Մշո Ս. Կարապետ վանքի «կաղ դևի» մասին պատմող ավանդությանը՝ հիշում է նաև Վասպուրականի Հոքվոց վանքի Ղուդրաթ խաթունին, որ նույնպես դուրս էր հանում թոնիրների մոխիրներն ու երևում միաբաններին: Այնուհետև ներկայացնելով Նեմրութ լեռան աշխարհագրական դիրքը՝ Րաֆֆին պատմում է նաև Նեմրութի հարևանությամբ գտնվող Գրգուռ սարի ստուգաբանական ավանդությունը¹:

Ութսունականների սկզբին «Մեղու Հայաստանի» թերթում հրապարակված հոդվածաշարը վերածվում է բուռն բանակոլի, երբ Րաֆֆին, փաստառատ նյութերով և ճշգրիտ հիմնավորումներով, հակադարձում է պարբերականի աշխատակից Հայկունու՝ Հովակիմ Գեղամյանի թունոտ ու անհիմն դիտողություններին: Ցույց տալու համար, որ ««Կայծերը» խորին հետազոտութեան և անցեալի ու ներկայի խղճմտաւոր ուսումնասիրութեան արդիւնք է»² Րաֆֆին (Փաւստոս) Տիրամոր վանքի մասին գրավոր ապացույցներ է բերում Սրվանձտյանցի ժողովածուներից, քանզի ոչ ոք, ըստ հոդվածագրի, նրա չափ չէր ուսումնասիրել և հավաքել ժողովրդական ավանդությունները, սովորությունները, մեր նախապաշարմունքներն ու սնոտիապաշտությունները. «Նա տուեց մեզ, բացի զանազան պարբերական թերթերի մէջ հրատարակված յօդուածներից, և չորս ամենահետաքրքիր գրքեր («Գրոց-բրոց», «Հնոց-նորոց», «Մանանայ» և «Թորոս-Աղբար»), որոնք խիստ հարուստ գանձ են մեր հնագէտների հետազոտութեան համար»³, գրում է վիպասանը «Մշակի» 1883թ-ի 144 համարի բանավիճային հոդվածում:

Ուշագրավ են Հակոբ Պարոնյանի դիտարկումները, ով (ըստ իր ժամանակակից և համաքաղաքացի Հ. Աղասյանի՝ Պարոնյանը «աղբիանուպոլսեցի էր ոչ միայն իր ծնունդով, այլ նաև մտավոր կազմությամբ»), այսինքն՝ կեղծիքն ու սուտը չհանդուրժող անկախ ու անշահախնդիր ոգու տեր մարդ և անաչառ ու անկողմնակալ քննադատ⁴: Անդրադառնալով «Համով-հոտով» ժողովածուին՝ Պարոնյանն ավելորդ է համարում երկասիրության առաջին թերթերը: Գնահատելով հեղինակի գրչի «հատուկ հրապոյրը և

¹ Տե՛ս Մելիքզադէ, Գրոց ու Բրոց կամ Սասունցի Դավիթ գրքոյկի աղիթով, տպուած Կ. Պոլսում, 1874 ամի Գ.Վ. Սրուանձտեանցի աշխատասիրութեամբ, «Մշակ», յունուարի 16, N2, 1875 էջ, 2:

² Փաւստոս, Պ. Հայկունու կրիտիկան եւ «Կայծերը», «Մշակ», N 144, 1883, էջ 2:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս Մակարյան Ալ., Հ. Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Ե., 2004, էջ 121:

քերթողական խանդն ու եռանդը»¹ մատնանշում է ժողովածուի չորս ճաշակներում տեղ գտած գիտական տարբեր ոլորտների համար օգտավետ նյութի առատությունը²:

Ժամանակակիցների կարծիքներով, գնահատականներով, դիտարկումներով ու դիտողություններով առանձնանում է նաև Սրվանձտյանցի նամականին: Նրա հետ նամակագրական կապ էին պահպանում արևելահայ և արևմտահայ անվանի մի շարք գործիչներ: Հիշարժան է Հայր Ղևոնդ Ալիշանի 1875 թ.-ի հունվարի 16-ի նամակն ուղղված Սրվանձտյանցին, ուր նամակագիրը խոստովանում է, որ Սրվանձտյանին հաջողվել է իրագործել իր վաղեմի փափագը՝ Հայաստանի տարբեր ծայրերում ճշգրտորեն գրառելով տեղական ավանդությունները: Ալիշանը վկայում է, որ թեև «Գրոց ու բրոցի» ավանդությունների և զրույցների մի մասը ծանոթ էին իրեն Հայր Ներսես վարդապետի ուղևորությունից, այնուամենայնիվ, բանահավաքի մոտ գտել է նաև անծանոթ զրույցներ³:

Ուշագրավ է ականավոր հայագետ Գրիգոր Խալաթյանի և Սրվանձտյանցի նամակագրությունը. հաղորդակցման այդ ձևի միջոցով պարզվում է նրանց հարաբերությունների անմիջականությունն ու շիտակությունը, մասնագիտական խորհրդակցությունների խորությունը: Խալաթյանը ժամանակակիցներից ամենադիպուկն էր, քանի որ կարողացավ ճշգրիտ բնորոշել և արժևորել Սրվանձտյանի գործունեության ողջ ծավալն ու կարևորությունը՝ նրան համարելով ժողովրդագիտական նյութերի հավաքագրման առաջամարտիկն ու ոգեշնչող օրինակը, ում հաջողվեց գրառված նյութերի գիտական, գործնական և բարոյական օգուտների գիտակցումն առաջացնել ու կենդանություն տալ հայ բանասիրության ուսումնասիրությանը⁴: Սրվանձտյանցին ուղղված նամակներից մեկում Խալաթյանը բարձր է գնահատում նամակի հասցեատիրոջ «Համով-հոտով» ժողովածուն, ուր, ըստ նրա, «հայ ժողովրդի անարվեստ, բայց վսեմ հանճարի հետ փայլում է նաև ծրագրողի տաղանդը»: Նամակագիրը կարևորում է ժողովածուի էջերում ընդգրված հեքիաթների առասպելական խորքը (գեղմանացիների, սլավոնների և հնդեվրոպական այլ ժողովուրդների հեքիաթների համեմատական քննության հա-

¹ Տե՛ս Պարոնյան Հ., Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1979, էջ 401:

² Տե՛ս նույն տեղում, էջ 401-402:

³ Տե՛ս Սրվանձտյանց Գ.Մանանայ, էջ 22-23:

⁴ Տե՛ս Խալաթյանց Գր., Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների, Մոսկվա, 1887, էջ Թ-Ժ, ԺԳ:

մար)՝ առավել արժեքավոր համարելով, սակայն, բարբառային նմուշները, որոնցով, ըստ նրա, աչքի են ընկնում «Մանանայի» հեքիաթները (Գառնիկ Աղբերը, Անմահական խնձորը, Երազատեսը, Նենգավոր մայրը, Նահապետենց աղջիկը, Հազարան բյուրյուրը): Ընդգծում է նաև չորրորդ ճաշակի արժանիքները՝ առանձնացնելով ժողովրդական երգերն ու աղոթքները, բառաբանը, որն ըստ նրա, ավելի լավն է, քան «Մանանայինը»¹:

Ապավինելով Սրվանձությանցի մեկ այլ ժամանակակցի՝ Խ. Մալումյանի՝ «Մշակ» օրաթերթի 1892թ-ի 145-146 համարներում հրապարակված հոդվածաշարին, որը լիովին բացահայտում է դպրոցներում ժամանակին տիրող անմխիթար վիճակը, դաժան և հակամանկավարժական մթնոլորտն ու Սրվանձությանցի թարմաշունչ և նորարական մեթոդների կիրառության բարերար ազդեցությունը: Նրա սաներից Գեղամ Տեր-Կարապետյանը² Սրվանձությանցի բազմոլորտ գործունեությունն արժևորող այն գեղագետներից էր, ով պաշտամունքի հասնող հարգանք ու սեր էր տաժում մեծանուն ուսուցչի նկատմամբ: Հատկապես բարձր էր գնահատում վարդապետի գրական, բանահավաքչական և մանկավարժական վաստակը, նրա ահռելի ներդրումը մշակութային և հասարակական կյանքի կազմակերպման գործընթացում. «...Դուք աշխատեցաք ոչ միայն բանիվ և գրով, այլ անձամբ և հոգով, ու կատարեցիք մեր մեջ ազգասիրական կարի նշանավոր և օգտակար մի դեր, որուն համակրեցավ ողջոյն գիտական դասն ազգիս որո օգուտը միշտ պիտի վայելեմք»³, գրում է նա 1886թ-ի սեպտեմբերի 5-ին Սրվանձությանցին ուղղված նամակում: Այս բացառիկ հոգեկցությունը պայմանավորված էր ուսուցիչ-աշակերտ կապի ամրությամբ (Գեղամ Տեր-Կարապետյանը Մշո

¹ Վարդանյան Վ., Գրիգոր Խալոյանի անտիպ նամակները Գարեգին Սրվանձությանցին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, N1, 1971, էջ 114-116:

² Գավառական տոհմիկ գրականության ականավոր ներկայացուցիչ Գեղամ Տեր-Կարապետյանը (1865-1918) գրական շրջանակներին առավել հայտնի էր Գեղամ կամ Մշո Գեղամ կեղծանուններով: Գեղամը ստեղծել է հայրենի եզերքի հողաբույրով, ազգային հոգեբանության եւ աշխարհընկալման, ժողովրդական բանահյուսության ենթաշերտերի ու լեզվամտածողության հենքով գոյավորվող գրականություն, հեղինակել ազգագրական, բանագիտական, տեղագրական, կրոնական եւ հրապարակախոսական հոդվածներ՝ թողնելով հարուստ ու բազմազան ժառանգություն: Առաջօր ազգագրագետների ու բանագետների պատշաճ ուշադրությանը չեն արժանացել և գիտական շրջանառության մեջ չեն դրվել նրա ազգագրագիտական աշխատանքներն ու բանահյուսական բազմաժանր նյութերի գրառումները, իսկ գրական ստեղծագործությունները թեև ժողովրդագիտական սկզբնաղբյուրների արժեք ունեն, սակայն դրանց նվիրված փոքրաթիվ ուսումնասիրությունները սահմանափակվում են հիմնականում գրականագիտական վերլուծություններով:

³ Պետրոսյան Հ., Մշո Գեղամի նամակները Գարեգին Սրվանձությանցին, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, N 1 (31), 1977, էջ 183:

Ս. Կարապետ վանքում աշակերտել է Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտյանցին և բազմաբեղուն գործունեությամբ դարձել իր ուսուցչի համախոհն ու հետևորդը):

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Սրվանձտյանցին նվիրված ժամանակակիցների այն հոդվածներն ու ակնարկները, որոնք ներկայացնում են նրա կյանքի և գործունեության համառոտ ուրվագիծը: Առանձնացնենք «Բազմավեպի» երկու համարներում հրապարակված Հ.Ս. Երեմյանի հոդվածները, որտեղ հոդվածագիրը, անդրադառնալով Սրվանձտյանցի բոլոր ժողովածուներին, բեղուն գրչի առանձնահատկություններին և նրա գործն արժևորող ժամանակակիցների կարծիքներին, ինքն էլ յուրօրինակ դիտարկում է կատարում. «Սրուանձտեանց կարելի չէ զուկակշռել Ալիշանի հետ, քանի որ միջավայրի և կեանքի պայմանները տարբեր եղած են: Միայն կարելի է համոզուիլ,-գրում է Երեմյանը,- որ «Համով-հոտով»ը, «Թորոս Աղբար»ը, «Գրոց-բրոց»ը անոյշ ու քնքոյշ հմայքի դասը Յուզիկէն առած են: Եւ Սրուանձտեանց այդ տեղը կը նկատեն քաջ աշակերտ Ալիշանի: Սիրտը Հայրիկէն, լեզուն Ալիշանէն»¹:

Ի մի բերելով նկատենք, որ ժամանակակիցների աննխադեպ և բուռն արձագանքների ուսումնասիրությունը ամբողջացնում է Սրվանձտյանցի գործունեության ու նրա շուրջ ձևավորված գիտամշակութային մթնոլորտի մասին պատկերացումները:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Արևելք», Կ. Պոլիս, 1885, թիվ 339, 18 փետրվարի:
2. Երեմեան Հ. Ս., Գարեգին Սրուանձտեանց, «Բազմավեպ», ամ. 7, Յունուար, թիւ 1, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1912, էջ 4-11:
3. Երեմեան Հ. Ս., Գարեգին Սրուանձտեանց, «Բազմավեպ», ամ. 7, փետրուար, թիւ 2, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1912, էջ 50-59:
4. Խալաթյանց Գր., Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների. Մոսկվա, 1887:
5. Հրազդան, Տ. Գարեգին Եպսկ. Սրուանձտեանց, «Հայրենիք», 23 տարի, թիւ 1892, 306, էջ 1:

¹ Երեմեան Հ. Ս., Գարեգին Սրուանձտեանց, «Բազմավեպ», ամ. 7, Յունուար, թիւ 1, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1912, էջ 11:

6. Մալումեան Խ. Գարեգին Սրուանձտեան, «Մշակ», N 137, 1892, էջ 1-2:
7. Մակարյան Ա., Հ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Ե., ԳԱԹ, 2004, էջ 292:
8. Մէլիքզադէ, «Գրոց ու Բրոց կամ Սասունցի Դավիթ» գրքոյկի առիթով, տպուած Կ. Պօլսում, 1874 ամի Գ.Վ. Սրուանձտեանցի աշխատասիրութեամբ, «Մշակ», յունուարի 16, N2, 1875, էջ 1-3:
9. Մէլիքզադէ, «Գրոց ու Բրոց կամ Սասունցի Դավիթ» գրքոյկի առիթով, տպուած Կ. Պօլսում, 1874 ամի Գ. Վ. Սրուանձտեանցի աշխատասիրութեամբ, «Մշակ», յունուարի 23, N3 1875, էջ 1- 3:
10. Պարոնյան Հ., Երկերի ժողովածու, հ. 10, ՀՍՍՌ ԳԱԱ հրատ., 1979, 779 էջ:
11. Պետրոսյան Հ., Մշո Գեղամի նամակները Գարեգին Սրվանձտյանցին, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, N 1 (31), 1977, էջ 181-196:
12. Սրուանձտեանց Գ., «Գրոց ու բրոց եւ Սասունցի Դավիթ կամ Միէրի դուռ», Կ. Պօլիս, տպ. Ե. Մ. Տնտեսեան, 1874, 192 էջ:
13. Սրուանձտեանց Գ., «Մանանայ», Կ. Պօլիս, տպ. Ե. Մ. Տնտեսեան, 1876, 456 էջ:
14. Սրուանձտեանց Գ., «Համով-հոտով», Կ. Պօլիս, տպ. Պաղտատլեան, 1884, 384էջ
15. Սրուանձտեանց Գ., «Համով հոտով», հ.Ա, Փարիզ, Printed in France, 1949 208 էջ:
16. Սրվանձտյանց Գ., Երկեր, հ.1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 668 էջ:
17. Վարդանյան Վ., Գրիգոր Խալթյանի անտիպ նամակները Գարեգին Սրվանձտյանցին, »Պատմաբանասիրական հանդես», 1971, N1, 111-130:
18. Տեր-Սարգիսեանց Ա., «Գրոց եւ Բրոց», «Արեւելեան մամուլ», Ե տարի, հունվար, 1875, էջ 12-16:
19. Փաւստոս, Պ. Հայկունու կրիտիկան եւ «Կայծերը», «Մշակ», N 144, 1883, էջ 1-3:
20. Օտյան Եր., «Գրական հիշատակներ», Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 4, Եր., Հայպետհրատ, 1962, 116 էջ:



THE REACTION OF CONTEMPORARIES TO G. SRVANDZTYANTS'S FOLKLORISITC-COLLECTIVE ACTIVITIES

HAYRIYAN LUSINE

*PhD in Philological Sceinces,
Researcher at the Institute of Archeology and Ethnography
of the National Academy of Sciences*

In the second half of the 19th century, with the book of "Writing and David of Sassoun or Mher's door" (K. Polis, 1874), G. Srvandztyants lays the foundation for the folklore movement. Srvandztyants' activity had a turning meaning of a historical and cultural significance. The intelligentsia of the time (G. Patkanyan, J. Alishan, Gr. Khalatyants, A. Shahnazaryan, S. Mandinyan, P. Delpyan, A. Arpiaryan, G. Otyan, H. Paronyan, B. Kechyan, S. Ter-Sargisents)), G. Sherents and others) reflected the warm reaction and enthusiasm of the society in their reviews, articles, numerous letters and references. One of the estheticians who valued Srvandztians's work and was a worthy follower of his work was, for example, his student Gegham Ter-Karapetyan (Gegham), who had a cult-like respect and love for his teacher, highly appreciating his literary, folklore-pedagogical merit and tremendous cultural and public contribution in the process of organizing social life. Having like-minded followers, Srvandztyants laid the foundation both for the history of folklore collections and for the traditions of studying philological and folklore scientific issues.

Keywords: Srvandztyants, folklore materials, folklore science, movement, material, collection, modern.

ОТЗЫВЫ СОВРЕМЕННИКОВ О ФОЛЬКЛОРНО-СОБИРАТЕЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ СРВАНДЗТЯНЦА

АЙРИЯН ЛУСИНЕ

*Кандидат филологических наук,
Научный сотрудник Национальной
академии наук Республики Армения*

Во второй половине XIX века своей книгой «Гроц у броц ев Сасунци Давид кам Мгери Дур» («Из книг и из уст и Давид Сасунский или Дверь Мгера»



, Константинополь, 1874 г.) Г. Срвандзтянц закладывает основу фольклорного движения. Деятельность Срвандзтянца имела переломное историко-культурное значение. Обзоры, статьи, многочисленные письма и ссылки интеллигенции того времени (Г. Патканян, Дж. Алишан, Гр. Халатянц, А. Шахназарян, С. Мандинян, П. Дельпян, А. Арпиарян, Г. Отян, Г. Паронян, Б. Кечян, С. Тер-Саргисенц (Тевканц), Г. Шеренц и др.) свидетельствуют об общественном тёплом приёме. Одним из эстетов, ценивших творчество Срвандзтянца и являвшегося достойным продолжателем его творчества, был, например, его ученик Гегам Тер-Карапетян (Гегам), питавший глубочайшее почтение и любовь к своему учителю, высоко ценивший заслуги писателя, **собирателя – фольклориста**, педагога, и его огромный вклад в процесс организации культурной и общественной жизни. Имея единомышленников, Срвандзтянц заложил основы истории собирания фольклора, а также традиции изучения фольклорных проблем.

Ключевые слова: *Срвандзтянц, собирательство, фольклористика, движение, материал, сборник, современник.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 21.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 22.09.2021թ.: